# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արագյուղ, (098)551651, aragyuxa@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 06-Ա

### ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ N02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արագյուղ համայնքի ավագանու 2017թվականի մարտի6-ի N02 հերթական նիստի օրակարգը .

1.Հայաստանի Հանրապետությանը ի դեմս «Հայջրմուղկոյուղի»փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

2.Արագյուղ համայնքի սեփականությունը համարվող հողամասը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

3.2017թվականի ընթացքում Արագյուղ համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՍԱԲԵԿ

2. ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՍԻՍ

3. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ՇԱՀԵՆ

4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԻՇԽԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԱՐԱՅԻԿ ԻՍՊԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արագյուղ, (098)551651, aragyuxa@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 7-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ Ի ԴԵՄՍ <<ՀԱՅՑՐՄՈՒԴԿՈՅՈՒԴԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի , ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> N1851-Ն որոշման պահանջին որոշում է.

1. Համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության ներքոհիշյալ գույքերը սեփականության իրավունքով անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետությանը ի դեմս <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ Արագյուղ համայնք:

1) Հողամաս 0,0368 հա մակերեսով, գույքի ծածկագիրն է՝ 0030-0024, վկայական N 23022017-07-0024 տրված 23.02.2017թ նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների գործառնական նշանակությունը՝ կոմունալ ենթակառուցվածքների

2) Օրվա կարգավորիչ ջրամբար՝ 61,5 մ$^2$ մակերեսով գույքի ծածկագիրն է՝ 0030-0024-001

3) Բաշխիչ հոր՝ 3մ$^2$ մակերեսով գույքի ծածկագիրն է ՝ 0030-0024-002

Կողմ -0 Դեմ -5 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՍԱԲԵԿ

2. ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՍԻՍ

3. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ՇԱՀԵՆ

4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԱՆ

5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԻՇԽԱՆ

**Համայնքի ղեկավար՝** ԱՐԱՅԻԿ ԻՍՊԻՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արագյուղ, (098)551651, aragyuxa@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 8-Ն

## ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածների պահանջները համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված հողամասի սխեման, համաձայն որի թույլատրել համայնքի ղեկավարի օտարելու մեկ լոտով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության 660մ$^2$ հողամաս, որի 1մ$^2$ համար մեկնարկային գին սահմանել 222 դրամ:
2. Օտարման ներկայացված հողամասի լոտը և ծածկագիրը ներկայացված է համաձայն հավելվածի
3. Հավանություն տալ աճուրդային հանձնաժողովի ներկայացրած աճուրդի անցկացման կարգին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՍԱԲԵԿ
2. ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՍԻՍ
3. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ՍԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԻՇԽԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԱՐԱՅԻԿ ԻՍՊԻՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արագյուղ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Արագյուղ, (098)551651, aragyuxa@mail.ru


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2017թվականի N 9-Ա

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել 2017 թվականի ընթացքում Արագյուղ համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԻՍԱԲԵԿ
2. ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԱՍԻՍ
3. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ՇԱՀԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԻՇԽԱՆ

Համայնքի ղեկավար՝ ԱՐԱՅԻԿ ԻՍՊԻՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ մարտի 6-ի N 09-Ա ՈՐՈՇՄԱՄԲ

## 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

1- ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ

2- ՄԱՐՏԻ 6-ԻՆ

3- ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ

4- ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ

5- ՀՈՒԼԻՍԻ 11-ԻՆ

6- ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-ԻՆ

7- ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ

8- ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ

Հաստատում եմ՝
Արագյուղ համայնքի ղեկավար՝
Ա. Իսպիրյան

# ԿԱՐԳ

Հողերի աճուրդի անցկացման համայնքի ավագանու 2017թ. Մարտի 6-ի
N 8 -Ն որոշմամբ

1. Աճուրդը անցկացվում է փակ , մասնակցում են աճուրդավարը,արձանագրողը և գրանցված անձինք:
2. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար վճարի անդորրագիր և անձնագիր:
3. Աճուրդի մասնակիցը աճուրդի անցկացման օրը մուծում է նախավճար, հողամասի մեկնարկային գնի 5%-ի չափով:
4. Աճուրդի մասնակցության համար՝ մուտքի վճար սահմանել 2.000 դրամ:
5. Աճուրդի մեկ քայլի արժեքը սահմանել տվյալ հողամասի մեկնարկային գնի 5%-չափով:
6. Եթե մասնակիցը աճուրդում չի հաղթել , ապա նախավճարը անմիջապես վերադարձվում է նրան:
7. Աճուրդը համարվում է սկսված , եթե մասնակիցների թիվը՝ 1 լոտի համար մեկից ավելի է:
8. Աճուրդում հաղթող է համարվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:
9. Եթե աճուրդը չի կայանում առաջին անգամ , ապա կրկնաճուրդը գյուղ. նշանակության հողերի համար կկայանա 7 աշխատանքային օրվա ընթացքում, մնացած հողերի համար 1 ամիս հետո:
10. Եթե աճուրդը չի կայանում երկրորդ անգամ , ապա հողամասը կարող է օտարվել ուղղակի վաճառքի ձևով , սահմանված մեկնարկային գնով:
11. Աճուրդը համարվում է չկայացած , եթե ներկայացվել է մասնակցության մեկ հայտ , կամ չի ներկայացվել, կամ աճուրդում հաղթած մասնակիցը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց: Աճուրդում հաղթած և հողամասը ձեռք բերելուց հրաժարված անձի կողմից մուծված նախավճարը ետ չի վերադարձվում և նա զրկվում է տվյալ հողամասը ուղղակի վաճառքով ձեռք բերելու իրավունքից:
12. Աճուրդում հաղթած անձը 10 օրվա ընթացքում պարտավոր է մուծել սակարկությունների արդյունքում ձևավորված ամբողջ գումարը:Եթե նշված ժամկետում չի վճարվում գումարը , ապա տվյալ լոտի համար հաղթող է ճանաչվում սակարկությունների ժամանակ 2-րդ առավելագույն գին առաջարկած անձը , որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել այդ գումարը:
13. Գումարը ամբողջությամբ վճարելուց հետո 2-օրյա ժամկետում կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր , որը ենթակա է նոտարական վավերացման և պետ. գրանցման:
14. Օտարման պայմանագրի նոտարական գրանցման և պետական. գրանցման ծախսերը կատարվում է գնորդի կողմից:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Իսպիրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գևորգյան
Յ. Նիկողոսյան
Ա. Մկրտչյան
Ի.Հարությունյան

Կարգը մշակված է աճուրդային հանձնաժողովի կողմից

01.03.2017թ.

Հավելված
Արագյուղ համայնքի ավագանու
2017թվականի մարտի 6-ի 8-Ն որոշման

| Նպատակային նշանակություն | Լոտ | Ծածկագիր | Տարածք մ/ք | Մեկնարկային գինը /դրամ/ | |
|---|---|---|---|---|---|
| Բնակավայրերի բնակելի կառուցապատման | 110 | 07-012-0576-0002 | 560 | 146520 | |
| | | | | | |
| | | | | | |